Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 47

ք. Երևան **25.05.2023թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/29441-2022, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.6/11539-2022, ՀՀ էկոնոմիկայի 01/13370-2022 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության, Քաղաքաշինության 06/11.1/5363-2023 և Կադաստրի ԱԳ/8940-2022 կոմիտեների գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի հողերի** նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Աբովյան համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից **7,816046 հա** այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 07-011-0220-0009) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության՝ բնակելի թաղամաս կառուցելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան